Տարածաշրջանային անվտանգության և տարանցիկ-էներգետիկ հոսքերի վերադասավորումը Կենտրոնական Ասիայում և Մերձկասպիայում (2021–2025 թթ.)

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 10.01.2025 թ.[1]

Սեղմագիր

ԱՌՎԱԿ-ը դիտարկում է Կենտրոնական Ասիայում և Կասպիական տարածաշրջանում ուժերի հավասարակշռության համակարգային վերափոխման գործընթացը XXI դարի առաջին քառորդում: Վերլուծվում են ռուսական ազդեցության թուլացման պատճառները, ինչպես նաև արտատարածաշրջանային դերակատարների՝ ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Չինաստանի և Թուրքիայի ներթափանցման մեխանիզմները: Հատուկ ուշադրություն է դարձվում 2022-2025 թթ. ժամանակաշրջանին, երբ ուկրաինական ուղղությամբ ՌԴ պաշարների կենտրոնացման համապատկերում տեղի ունեցավ տարածաշրջանի երկրների ռազմավարական գործընկերության արագ հաստատութենակացումն այլընտրանքային ուժային կենտրոնների հետ: Հիմնական ենթակառուցվածքային նախագծերը (ներառյալ TRIPP-ը), Չինաստանի ներդրումային ծրագրերը և թյուրքական պետությունների կազմակերպության (ԹՊԿ) ինտեգրման նախաձեռնությունները դիտարկվում են որպես նոր աշխարհատնտեսական իրականության ձևավորման գործիքներ:

Բանալի բառեր. *Կենտրոնական Ասիա, Կասպիական տարածաշրջան, աշխարհաքաղաքական մրցակցություն, էներգետիկ անվտանգություն, TRIPP նախագիծ, ՉԺՀ, Թուրքիա, ԹՊԿ, ռազմավարական գործընկերություն, ռուսական ազդեցություն:*

1. ՌԴ գերակայության ներցիոն մոդելի պատմական շարժընթացը և ճգնաժամը

Ուժերի նոր գլոբալ դասավորության պայմաններում Կենտրոնական Ասիայի և Կասպիական տարածաշրջանները հատուկ նշանակություն են ձեռք բերում: Դրանք հարուստ են բնական պաշարներով, գտնվում են «*Արևելք–Արևմուտք*» և «*Հյուսիս–Հարավ*» առանցքներով առևտրա–էներգետիկ երթուղիների խաչմերուկում, ինչպես նաև առանցքային դեր են խաղում Եվրասիայի սրտում գերիշխանության համար համաշխարհային և տարածաշրջանային տերությունների ռազմաքաղաքական մրցակցության համատեքստում:

ԽՍՀՄ փլուզումը խթանեց արևմտյան երկրների, ինչպես նաև Թուրքիայի և Չինաստանի հետաքրքրությունը տարածաշրջանի նկատմամբ, որի աշխարհաքաղաքական և տնտեսական աճը համընկավ Կենտրոնական Ասիայում Ռուսաստանի գերիշխանության մայրամուտի հետ: Նոր դերակատարների ներթափանցումը տարածաշրջան ուժեղանում էր Մոսկվայի դիրքերի թուլացմանը զուգընթաց, որն իր քաղաքականությունը կառուցում էր Խորհրդային Միությունից ժառանգած ներցիոն տնտեսական և մտավոր-քաղաքակրթական կապվածության հիման վրա՝ նոր պայմաններում չձևավորելով այլ, կայուն հարթակ նախկին հարաբերությունների պահպանման համար: Արդյունքում ԱՊՀ-ի, ՀԱՊԿ-ի, ԵԱՏՄ-ի շրջանակներում ինտեգրման նախաձեռնություններին չեն միացել Մերձկասպիայի և Կենտրոնական Ասիայի բոլոր հետխորհրդային հանրապետությունները՝

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 05.01.2026 թ.:

հիմնականում մնալով որպես ձևական և մակերեսային նախագծեր, որոնք իրականացվել են այնպիսի չափով, որը չի խոչընդոտել նախկինում «կողմնակի» աշխարհաքաղաքական դերակատարների՝ տարածաշրջան ներթափանցելու գործընթացին:

2. ԵՄ-ի և ԱՄՆ-ի ազդեցության հաստատութենականացումը. էներգետիկ երկխոսությունից մինչև ռազմավարական հովանավորություն

XXI դարի առաջին քառորդի ավարտին աշխարհաքաղաքական նոր խաղացողները Մերձկասպյան տարածաշրջանում և Կենտրոնական Ասիայում կարողացան զգալի քանակությամբ քաղաքական, տնտեսական և մտավոր-գաղափարական պաշարներ կուտակել, որն անհրաժեշտ էր Ռուսաստանի ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար: ԱՄՆ-ը, ԵՄ-ը և Չինաստանն այստեղ արդեն լայնածավալ ծրագրեր են իրականացնում առևտրա-տրանսպորտային երթուղիների անցկացման, ածխաջրածինների արդյունահանման ծավալների ընդլայնման և դրանց տեղափոխման, ինչպես նաև հումքային արդյունաբերության համեմատաբար նոր և հեռանկարային հատվածի՝ հազվագյուտ մետաղների արդյունահանման զարգացման ուղղությամբ: Տվյալ դերակատարներն ակտիվորեն ներդրումներ են կատարում տարածաշրջանի հիդրոէներգետիկայի, «*կանաչ էներգետիկայի*», ոսկու արդյունահանման արդյունաբերության բնագավառներում և ջրային ենթակառուցվածքներում: Զուգահեռաբար, Արևմուտքն ակտիվացնում է «*ժողովրդավարական արժեքների*» ներկրումն այստեղ և ընդլայնում հետխորհրդային տարածաշրջանի երկրների «*ինքնիշխանության ամրապնդման*» ծրագրերը՝ «*ռուսական կայսերական ռևիզոնիզմի սպառնալիքների*» համատեքստում:

Թուրքիան, իր հերթին, զգալիորեն աշխուժացրել է տարածաշրջանում սեփական հովանու ներքո գտնվող թյուրքական հանրապետությունների էթնոմշակութային միավորմանն ուղղված բազմաբնույթ գործունեությունը՝ ձգտելով հեռանկարում ավելացնել այդ ուղղությամբ արդեն իսկ ձեռք բերված հաջողություններն «*ազգակից*» պետությունների և ժողովուրդների ռազմաքաղաքական դաշինքում, որը ոչ պաշտոնապես կոչվում է «*Թուրան*»: Տարածաշրջանում համարժեք տնտեսական ծավալման համար հավաքական Արևմուտքի և ՉԺՀ-ի հնարավորություններին համադրելի պաշարներ չունենալով հանդերձ, Անկարան, այնուամենայնիվ, հմտորեն խաղում է քաղաքական-գաղափարական դաշտում՝ թյուրքական հանրապետություններին առաջարկելով հավասարակշռել հիշյալ դերակատարների հարաճուն ազդեցությունն ինտեգրման տարաբնույթ ձևաչափերով (միասնական այբուբեն, նույնական գիտակրթական բազա, բազմակողմ ռազմական համագործակցություն և այլն):

Ընդհանուր առմամբ, վերը նշված գործընթացները նպաստեցին Կենտրոնական Ասիայում և Մերձկասպիայում ՌԴ ազդեցության խաթարմանը, ինչը մեծապես պայմանավորված էր նաև համաժամանակ գործող «*նոր*» դերակատարների միջև

կոնսենսուսով՝ չնայած նրանց միջև առկա կոշտ մրցակցությանը: Կենտրոնական Ասիայում ծավալման առաջին փուլը որոշ չափով ենթադրում էր ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Թուրքիայի և Չինաստանի փոխադարձ հանդուրժողականություն միմյանց շահերի նկատմամբ, քանի որ տարածաշրջանում նշված կողմերի ամրագրման առանցքային պայման էր համարվում համատեղ ուժերով Մոսկվայի դուրս մղումը հարավային ուղղությամբ իր ռազմավարական շահերի գոտուց: Այս առումով տրամաբանական է թվում, որ այդ դերակատարներն իրենց հիմնական ձեռքբերումներն ամրագրել են ամուր քաղաքական և իրավական հիմքերի տեսքով՝ ռուս-ուկրաինական զինված դիմակայության ժամանակ, որը Մոսկվայի ռազմավարական ուշադրությունը կենտրոնացրել է հիմնականում Արևմտյան ռազմաքաղաքական և դիվանագիտական ճակատի վրա:

Սամարղանդում 04.04.2025 թ. տեղի ունեցավ պատմության մեջ առաջին «Եվրամիություն–Կենտրոնական Ասիա» գագաթնաժողովը, որի արդյունքում որոշում կայացվեց և փաստաթղթեր ստորագրվեցին հարաբերությունների մակարդակը «*ռազմավարական գործընկերության*» ձևաչափի բարձրացնելու վերաբերյալ, ինչը նույնպես ամրագրվեց ԵՄ-ի կողմից խոստացված €12 մլրդ ծավալով նոր ներդրումային փաթեթով [1]: Ուկրաինայում Հատուկ ռազմական գործողությունն (ՀՌԳ) սկսվելուց ընդամենը 5 ամիս անց՝ 18.07.2022 թ., Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենն այցելեց Բաքու, որտեղ ստորագրվեց «*Էներգետիկ ոլորտում ԱդրՀ-ի և ԵՄ-ի միջև ռազմավարական գործընկերության մասին փոխըմբռնման հուշագիր*» [2]: Նույն թվականի աշնանը, ելույթ ունենալով Հունաստան–Բուլղարիա գազային ինտերկոնեկտորի բացման արարողությանը, որին ներկա էր Իլհամ Ալիևը, ֆոն դեր Լայենը Ադրբեջանին անվանել է «*Եվրոպայի հուսալի գործընկեր*» [3]: Դրանով հաստատվել է մի շարք փորձագետների ենթադրությունը Բրյուսելի էներգետիկ քաղաքականության ուղեծրում Բաքվի վերջնական ամրագրման մասին, որն իրականացվում է ի վնաս Մոսկվայի քաղաքական-տնտեսական շահերի: Փորձագետների կարծիքով՝ դեպի Եվրոպա ադրբեջանական գազային մատակարարումների ծավալների ընդլայնումը, որը սկսվել է 2022 թվականից, թելադրված էր ոչ այնքան տնտեսական նպատակահարմարությամբ, որքան քաղաքական դրդապատճառներով, որոնց էությունն ադրբեջանա-ռուսական հարաբերություններում պառակտման խորացումն ու Բաքվին՝ Մոսկվայի դեմ ավելի վճռական քայլերի քարտ-բլանշի տրամադրումն էր: Դրա արդյունքը դարձան 2023 թ. սեպտեմբերին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի վերջնական գրավումը, ԵՄ-ի փաստորեն լուռ արձագանքի պարագայում Ռուսաստանի խաղաղապահ զորակազմի (ՌԽԶ) հետագա վտարումը տարածաշրջանից, ինչպես նաև ադրբեջանական սպառազինության կանոնավոր մատակարարումներն Ուկրաինային:

Դրանով իսկ ԵՄ-ը՝ Մեծ Բրիտանիայի անմիջական մասնակցությամբ, օգտվելով ուկրաինական ուղղությամբ Մոսկվայի ուշադրության կենտրոնացումից, ըստ էության,

սկսեց Մերձկասպյան տարածաշրջանը և Կենտրոնական Ասիան Ռուսաստանի ազդեցության գոտուց դուրս բերելու եզրափակիչ փուլը:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա Կենտրոնական Ասիայի առնչությամբ նրա վերջին տարիների քաղաքականության հիմքում նախագահ Դոնալդ Թրամփի կողմից Վաշինգտոնում տարածաշրջանի երկրների միանգամից հինգ առաջնորդների ընդունելությունն էր 2025 թ. նոյեմբերի սկզբին՝ «*C5+1*» գագաթնաժողովի ձևաչափով, որի ընթացքում պայմանավորվածություններ ձեռք բերվեցին աննախադեպ ծավալներով փոխադարձ ներդրումների ընդլայնման վերաբերյալ [4]:

Հարկ է առանձնապես նշել առաջիկա մի քանի տարվա ընթացքում Ուզբեկստանի կողմից ԱՄՆ-ի տնտեսությունում ներդրումների (ավելի քան $100 մլրդ) մասին երկկողմ պայմանավորվածությունը: Իր հերթին ԱՄՆ-ը հնարավորություն կստանա մասնակցելու Կենտրոնական Ասիայի նախագծերին էներգետիկայի, նորարարությունների, հազվագյուտ մետաղների արդյունահանման, գյուղատնտեսության և ռազմավարական նշանակություն ունեցող այլ ոլորտներում: Վերլուծաբանների կարծիքով՝ այդ համագործակցությունը կարող է դիտվել որպես տարածաշրջանում ԱՄՆ-ի գերիշխող դերի հայտ՝ այստեղ ՌԴ-ի մնացորդային տնտեսական ազդեցության գրեթե ամբողջական վերացմամբ և չինական հարաճուն հավակնությունների միաժամանակյա չեզոքացմամբ հանդերձ:

Դրանից մի քանի ամիս առաջ Դ. Թրամփի վարչակազմը փաստորեն նախաձեռնել և առաջ է մղել ԱՄՆ-ի, Հայաստանի և Ադրբեջանի միջև եռակողմ համաձայնագիրը TRIPP լոգիստիկ երթուղու ստեղծման մասին՝ «*99 տարի ժամկետով այն կառավարելու ԱՄՆ բացառիկ իրավունքներով*» [5]: Այս նախագծի նշանակությունը պետք է գնահատել Կենտրոնական Ասիայի առնչությամբ Վաշինգտոնի քաղաքականության հետ համակողմանի կապի մեջ: ԱՄՆ-ն ստեղծում է «*կամուրջ*», որն ապահովում է Թուրքիայի տարածքով ուղիղ մուտք ռազմավարական նշանակություն ունեցող տարածաշրջաններ և միաժամանակ թույլ է տալիս այդ երթուղու նկատմամբ վերահսկողության միջոցով սահմանափակել Անկարայի ավելորդ ակտիվությունը Կենտրոնական Ասիայում:

Այդպիսով իսկ Վաշինգտոնն իր տրամադրության տակ ստացել է Կենտրոնական Ասիա ներթափանցելու նոր բանալիներ Աֆղանստանում փաստացի ձախողված առաքելությունից հետո, որն ավարտվել էր 2021 թ. օգոստոսին [6]: Հարկ է նաև նշել, որ ԱՄՆ-ը, որպես Կենտրոնական Ասիայի և Մերձկասպյան երկրների շարքում գլխավոր գործընկեր է դիտարկում Ուզբեկստանին՝ իբրև ժողովրդագրական և ռազմական առումով տարածաշրջանի ամենանշանակալի հանրապետություն, որը վերջին երեք տասնամյակի ընթացքում ավելի զգուշավոր քաղաքականություն է վարել ռուսաստանյան և թուրքական ինտեգրման նախագծերի նկատմամբ և համեմատաբար փակ է մնացել չինական տնտեսական ծավալման համար: Վաշինգտոնը, ըստ երևույթին, ծրագրում է Ուզբեկստանը դարձնել իր գլխավոր հենարանը տարածաշրջանում՝ ի հակակշիռ

Ղազախստանում ԵՄ-ի, Մեծ Բրիտանիայի և Չինաստանի, ինչպես նաև Տաջիկստանում Ռուսաստանի ուժեղ դիրքերի: Այդ մասին են վկայում, մասնավորապես, ֆինանսաբանկային ոլորտում Տաշքենդի նախաձեռնությունները, որոնք ուղղված են ԱՄՆ-ի և Ուզբեկստանի միջև կապիտալի տեղաշարժի ազատականացմանը [7]:

3. Չինաստանի տնտեսական ծավալումը. համապարփակ գործընկերության ձևավորումը

Կենտրոնական Ասիայի ուղղությամբ ԵՄ-ի և ԱՄՆ-ի ակտիվացմանը զուգահեռ Չինաստանը նաև ձգտում է ամրապնդել ու խորացնել տարածաշրջանի սուբյեկտների հետ տարիներ շարունակ հաստատված ռազմավարական փոխգործակցությունը, որը հիմնված է առավելապես տնտեսական հարթակի վրա: Դեռևս 2018 թ. հուլիսին Չինաստանը և Ղրղզստանը ստորագրել են «*ռազմավարական գործընկերության*» մասին փաստաթուղթ [8]: 2023 թ. մայիսին կողմերը ստորագրել են «*ՉԺՀ-ի և ՂՀ-ի համատեղ հռչակագիր նոր դարաշրջանում համապարփակ ռազմավարական գործընկերության հաստատման մասին*» [9]: Հետագայում՝ 2025 թ. փետրվարին նախագահ Սադիր Ժապարովի ՉԺՀ կատարած այցի արդյունքներով Բիշքեկը և Պեկինը ստորագրել են երկու երկրների միջև «*գործընկերության խորացման*» մասին համատեղ հայտարարություն [10]: Այս հարաբերությունների արդյունքը բազմամիլիարդանոց չինական ներդրումներն էին Ղրղզստանի տնտեսության մեջ, որոնք Պեկինին առաջին տեղում դրեցին ներդրողների շրջանում և Բիշքեկի արտաքին առևտրաշրջանառության շուրջ մեկ երրորդն ամրագրեցին ՉԺՀ-ին:

Հարաբերությունների խորացման և չինական ակտիվ ներդրումային քաղաքականության նմանատիպ դինամիկա է նկատվում նաև ղազախական ուղղությունում, որտեղ Պեկինն իր շահերը նախանշել էր դեռևս 2005 թ.՝ այն ժամանակ Ալմա-Աթայի հետ ստորագրելով հռչակագիր «*ռազմավարական գործընկերության հաստատման և զարգացման մասին*»: Ինչպես և Ղրղզստանի պարագայում է, այս հարաբերությունները երկար ճանապարհ են անցել մինչև «*համապարփակ ռազմավարական գործընկերության*» փուլը, որը ենթադրում է Պեկինի ներգրավում Ղազախստանի տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում և Աստանայի վրա ազդեցության քաղաքական լծակների ձևավորում: 2025 թ. սեպտեմբերին ՉԺՀ իշխանությունները Ղազախա-չինական գործարար խորհրդի 8-րդ նիստի արդյունքներով հայտարարեցին $15 մլրդ ընդհանուր գումարով նոր չինական ներդրումային փաթեթի ձևավորման մասին, որն էլ ավելի կամրապնդի երկրների միջեւ գործարար հարաբերությունները՝ ինչպես երկկողմ մակարդակով, այնպես էլ Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) շրջանակներում: Այսպիսով, 2025 թ. արդյունքներով Ղազախստանը մնում է չինական ուղղակի ներդրումների խոշորագույն հասցեատերը տարածաշրջանում (32%), որին հաջորդում են Ուզբեկստանը (30%) և Թուրքմենստանը (27%) [12]:

Դեպի Ուզբեկստան Չինաստանի ֆինանսատնտեսական ներթափանցման աճի կորագիծը ցույց է տալիս, որ Պեկինի կտրուկ ակտիվացման շրջանն սկսվել է 2022 թ.՝ ռուս-ուկրաինական զինված հակամարտության համապատկերում և իր գագաթնակետին հասել 2024-2025 թթ.: Ընդհանուր առմամբ, վերջին տասնամյակում Ուզբեկստանի տնտեսությունում չինական կապիտալի ներհոսքն արձանագրել է աննախադեպ՝ 40-ապատիկ աճ [13]: Տաշքենդի և Պեկինի միջև սերտ համագործակցությունը, հետևելով Աստանայի և Բիշքեկի օրինակին, պաշտոնապես ամրագրվել է 24.01.2024 թ. ստորագրված փաստաթղթով, որը երկկողմ հարաբերությունները բարձրացրել է որակական նոր՝ «համապարփակ ռազմավարական գործընկերության» մակարդակի [14]:

ՉԺՀ-ի և Թուրքմենստանի միջև հարաբերությունների նույն մակարդակի հաստատման մասին հռչակվել էր մեկ տարի առաջ Չինաստանի կոմկուսի նախագահ Սի Ցզինպինի և Թուրքմենստանի նախագահ Սերդար Բերդիմուհամեդովի համատեղ կատարած հայտարարության մեջ [15]: Ըստ էության, տվյալ փաստաթուղթն արդեն գոյություն ունեցող սերտ տնտեսական և քաղաքական կապերի իրավաքաղաքական ամրապնդում է դարձել, կապեր, որոնց հիմքը կազմում է թուրքմենական գազի լայնածավալ արտահանումը Չինաստան:

Չինաստանը դեռևս 2017 թ. «*Համապարփակ ռազմավարական գործընկերության*» մասին պայմանագիր է ստորագրել նաև Տաջիկստանի հետ [16]: Չնայած չինական ուղղակի ներդրումներ ստանալու հարցում Դուշանբեի բաժինը տարածաշրջանի երկրների շրջանում ամենահամեստն է, Պեկինն, այնուամենայնիվ, մնում է Տաջիկստանի տնտեսության գլխավոր արտաքին առևտրային գործընկերը և ներդրողը: Սակայն երկու երկրների միջև փոխգործակցության ամենանշանակալի ոլորտը համարվում է ռազմաքաղաքական անվտանգությունը: Պեկինն ակտիվ աշխատանք է տանում տաջիկական բանակի, տաջիկական սահմանների ամրապնդման և Դուշանբեում *«աշխարհիկ վարչակարգի»* պահպանման ուղղությամբ՝ այդ հանրապետության ներքին և արտաքին կայունությունը կապելով «*ույղուրական հարցի*» հետ և Տաջիկստանը դիտարկելով որպես Կենտրոնական Ասիա արմատական-իսլամիստական և ծայրահեղ ազգայնական (թյուրքական) գաղափարական շարժումների ներթափանցման բնական խոչընդոտ [17]: Տաջիկստանում Չինաստանի քաղաքական և ռազմական ներկայության կտրուկ աճը կրկին տեղի ունեցավ ուկրաինական պատերազմի ժամանակ, երբ Մոսկվան զգալիորեն նվազեցրեց ՀԱՊԿ հարավային սահմաններ ուղղվող ուշադրությունն ու պաշարները: Միևնույն ժամանակ, Պեկինը Տաջիկստանի անվտանգության ամրապնդման առաջին քայլերն սկսել է ձեռնարկել Աֆղանստանից ամերիկյան բանակի դուրսբերումից հետո՝ ձգտելով կանխել անկայունության և քաղաքացիական պատերազմի արտահանումն այդ հանրապետություն, իսկ այնուհետև՝ ամբողջ Կենտրոնական Ասիա:

Վերջապես, Կենտրոնական Ասիայի առնչությամբ Չինաստանի քաղաքականության համատեքստում հատուկ ուշադրության արժանացավ նաև Ադրբեջանը: 2024 թ. հուլիսին Պեկինը և Բաքուն ստորագրեցին «*Հռչակագիր ռազմավարական գործընկերության մասին*» [18], իսկ արդեն 2025 թ. ապրիլին հայտարարեցին հարաբերությունների աստիճանը «*համապարփակ ռազմավարական գործընկերության*» մակարդակի բարձրացնելու մասին [19]: ԱդրՀ-ում ՉԺՀ-ի ներդրումային քաղաքականությունը չունի Ղազախստանի կամ Ղրղզստանի հետ համադրելի ծավալներ: Այնուամենայնիվ, Չինաստանն այս պահին Ադրբեջանի համար ներմուծման խոշորագույն աղբյուրն է և երկրի 4-րդ խոշորագույն առևտրային գործընկերը: Պեկինին հիմնականում հետաքրքրում են ոչ թե Բաքվի համար հիմնարար ածխաջրածինների արդյունահանման և նավթավերամշակման ոլորտները, այլ Ադրբեջանի արևային էներգետիկան և տարանցիկ ներուժը, երկիր, որը հանդիսանում է «*Մեկ գոտի, մեկ ճանապարհ*» նախագծի առանցքային օղակը և, մասնավորապես, Կասպից ծովով անցնող «*Միջին երթուղու*» գլխավոր հանգույցը [20]:

Ինչպես հետևում է վերոգրյալից, այս փուլում ՉԺՀ-ն Կենտրոնական Ասիայի և Կասպիական տարածաշրջաններում տնտեսական գործընթացները խթանող գլխավոր և ամենաակտիվ արտաքին ուժն է: Չինաստանն ձգտում է համապարփակ և հավասարաչափ աշխատանք իրականացնել ամբողջ տարածաշրջանի նկատմամբ՝ յուրաքանչյուր երկրի առաջարկելով համագործակցություն այն ոլորտներում, որոնք առավել մեծ հետաքրքրություն և հեռանկար են ներկայացնում Պեկինի համար: Արդյունքում ձևավորվել է փոխգործակցության և ներդրումային նախագծերի լայն շրջանակ, որոնք ընդգրկում են առևտրա-լոգիստիկ ոլորտը (ամբողջ տարածաշրջանը), նավթի արդյունահանումը և միջուկային էներգետիկան (Ղազախստան), ոսկու արդյունահանումը և հազվագյուտ ապարների հետախուզումը (Ղրղզստան և Ուզբեկստան), գազի ներմուծումը (Թուրքմենստան), «*կանաչ էներգետիկան*» (Ադրբեջան), անվտանգությունը (Տաջիկստան): Ընդհանուր առմամբ, նման ռազմավարությունը «*փափուկ ուժի*» ձև է, որտեղ լայնածավալ տնտեսական ծավալումն անխուսափելիորեն վերաճում է ուղղակի քաղաքական գերիշխանության գործիքի:

4. Պանթուրանիզմը որպես Անկարայի գաղափարական և ռազմաքաղաքական ուղեգիծ

Կենտրոնական Ասիայում և Կասպից ծովի շրջակայքում իր շահերը նշմարող խոշոր խաղացողներից ևս մեկը Թուրքիան է: Տարածաշրջանն Անկարային հետաքրքրում է ինչպես պաշարային և շուկայական հսկայական բազայի առումով, որը կարող է խթանել Թուրքիայի տնտեսական աճը, այնպես էլ նրա ռազմաքաղաքական հավակնությունների համատեքստում, որոնք հիմնված են Անկարայի ղեկավարության ներքո թյուրքական

երկրների եւ ժողովուրդների խորը ինտեգրման ծրագրի վրա: Տարածաշրջանում տնտեսական ծավալման համար անհրաժեշտ ֆինանսական ներուժով Թուրքիան անհամեմատ զիջում է ԱՄՆ-ին, ԵՄ-ին և Չինաստանին: Ուստի հիմնական շեշտը դնում է թուրքերի հետ Կենտրոնական Ասիայի երկրների և Ադրբեջանի էթնո-լեզվական ազգակցական կապի գործոնի վրա՝ ակտիվորեն առաջ մղելով թյուրքիզմի և պանթուրանիզմի գաղափարախոսությունների հիման վրա նրանց արբանյակների վերածելու իր նախաձեռնությունները: Անկարան տարածաշրջանում իր համեմատաբար թույլ ֆինանսատնտեսական ակտիվությունը փոխհատուցում է կրթամշակութային նախագծերի իրականացմամբ, բնակչության լայն շերտերի հետ գաղափարական աշխատանքով, տեղական վերնախավերում ազգայնական տրամադրությունների աճի քարոզչությամբ և համատեղ ռազմական ու պաշտպանական ծրագրերի իրականացմամբ: Դրանով Անկարան հմտորեն օգտագործում է թյուրքական պետությունների ձգտումը՝ խուսափելու տարածաշրջանային նոր խաղացողներից իրենց միակողմանի կախվածությունից: Հանդես գալով որպես ուժի այլընտրանքային կենտրոն՝ Թուրքիան մեծացնում է իր ներկայությունը Կենտրոնական Ասիայում և Ադրբեջանում՝ գործընկերներին առաջարկելով շահերի հավասարակշռման և արտաքին քաղաքական կապերի բազմազանացման մեխանիզմ:

Կենտրոնական Ասիայի թյուրքական երկրներ և Ադրբեջան Թուրքիայի ակտիվ ներթափանցումն սկսվեց ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո: 2009 թ. հոկտեմբերին Նախիջևանում կայացած հանդիպման ժամանակ հայտարարվեց «*Թյուրքական խորհուրդ*» կազմակերպության ստեղծման մասին, որն իր ծրագրում նախանշեց թյուրքական երկրների ապագա ինտեգրման ուրվագծերը, որը հավակնում է Եվրասիայում ուժի նոր բևեռի ձեւավորմանը: 2021 թ. նոյեմբերին Ստամբուլում «Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհրդի» գագաթնաժողովում «*Թյուրքական խորհուրդը*» վերանվանվեց «*Թյուրքական պետությունների կազմակերպություն*» (ԹՊԿ): Այս ակտը խորհրդանշում էր աշխարհաքաղաքական միության մեջ էթնոմշակութային ինտեգրման նախագծի վերջնական վերափոխման փուլը, որն ամրապնդվեց տարածաշրջանային և համաշխարհային օրակարգի գրեթե բոլոր հարցերի շուրջ մոտեցումների և հայացքների համաձայնեցմամբ, խիտ ռազմական համագործակցությամբ՝ «*Թուրանի բանակի*» ստեղծման հեռանկարով [21], գիտական և կրթական ծրագրերի ստանդարտացմամբ և թյուրքական աշխարհի օրգանական սերտաճման համար այնպիսի հիմնական հիմքի ներդրմամբ, ինչպիսին է միասնական այբուբենի ընդունումը [22]:

Կենտրոնական Ասիայում և Ադրբեջանում թյուրքական ինտեգրացիոն ծրագրերի իրականացման առավել ակտիվ փուլը ժամանակի առումով նույնպես համընկավ ռուս-ուկրաինական պատերազմի հետ: Ընդ որում, բազմաշերտ թյուրքական ինտեգրմանն ակտիվորեն աջակցող վերլուծաբանները դա բացատրում են Մոսկվայի տիրակալական

ռևիզիոնիզմի և հարաճուն չինական հավակնությունների դեմ ուղղված կանխարգելիչ միջոցառումների անհրաժեշտությամբ [23]:

5. Եզրահանգումներ. ռուսական ազդեցության քայքայումը և նոր մարտահրավերները

Ակնհայտ է դառնում, որ վերջին 4 տարում, որոնց ընթացքում ՌԴ-ն կլանված էր ուկրաինական պատերազմով և Արևմուտքի հետ քաղաքական-դիվանագիտական հակամարտությամբ, նախկինում «*կողմնակի*» համարվող դերակատարները վերածվել են Կենտրոնական Ասիայի և Մերձկասպիայի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական գործընթացների լիիրավ մասնակիցների: Նրանք ձգտում են սահմանել խաղի կանոններ՝ Մոսկվայի տարածաշրջանային քաղաքականությունը հասցնելով ՝ նախաձեռնողականությունից զուրկ պատասխան արձագանքի սկզբունքով կատարվող գործողությունների:

Տարածաշրջանում ռուսական ազդեցության ոլորտը ենթարկվում է կառուցվածքային կրճատման՝ մասնատվելով պաշտպանական, էներգետիկ և առևտրատնտեսական համագործակցության առանձին հատվածների: Այդ կապերը, որոնք ժառանգվել են դեռևս 90-ական թթ. հետխորհրդային ճարտարապետությունից, աստիճանաբար կորցնում են իրենց առաջնահերթությունն Ադրբեջանի և Կենտրոնական Ասիայի պետությունների համար՝ նոր ուժային կենտրոնների հետ ռազմավարական դաշինքների ձևավորման համապատկերում: Ռուսաստանը դեռևս չի կարող առաջարկել համարժեք համապարփակ ծրագրեր տնտեսական զարգացման, տեխնոլոգիական նորարարությունների և անվտանգության համակարգերի ոլորտում, որոնք նրան թույլ կտան, նույնիսկ հաշվի առնելով համաշխարհային մրցակիցների ներթափանցումը, պահպանել իր առաջատար դիրքերը տարածաշրջանում: Իր առարկայորեն թուլացած դիրքերը փոխհատուցելու, Կենտրոնական Ասիայի հանրապետությունների հասարակական միջավայրում, այսպես կոչված, «*հետդարձ հայրենասիրական ցրամադրությունները*» և ԽՍՀՄ բարեկամության ու եղբայրության կարոտախտը վերարտադրելու փորձերը վերջնականապես իրենց սպառում են՝ կապված սերունդների և քաղաքական վերնախավերի փոփոխության հետ: Այս պատումները ոչ միայն անհասկանալի են Կենտրոնական Ասիայի և Ադրբեջանի ժողովուրդների նոր երիտասարդ սերնդի համար, այլև, ոչ առանց արտաքին ազդեցության, ընկալվում են որպես Ռուսաստանի մտադրություն «*վերադառնալ կայսերական քաղաքականության ուղի և վերականգնել ԽՍՀՄ ժառանգությունը*»: Հաշվի առնելով այս բոլոր գործոնները՝ Կենտրոնական Ասիայի և Ադրբեջանի տարածաշրջանային մայրաքաղաքների հետ Մոսկվայի հարաբերությունների ուղղահայաց մոդելը վերածվել է հորիզոնականի:

Թեև Ռուսաստանի՝ տարածաշրջանային առանցքային դիրքերի վերջնական կորստի մասին խոսելը դեռևս վաղաժամ է, սակայն ակնհայտ է որակական տեղաշարժը: ՇՀԿ-ի և

ԹՊԿ-ի (ՕՏՊ) նման նոր ինտեգրացիոն նախագծերի գործնական բովանդակությունը դրանք շահեկանորեն առանձնացնում է ԱՊՀ, ՀԱՊԿ և ԵԱՏՄ տիպի կառույցներից, որոնցից շատերն այսօր գտնվում են ձևականության և արդիականության խորը ճգնաժամում: Ամեն դեպքում, Կենտրոնական Ասիայում և Կասպիական տարածաշրջանում ռուսական բացարձակ գերիշխանության փուլն այլևս անցյալ է: Այս պահին Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Չինաստանը և Թուրքիան արդեն ծանր և ձգձգվող մրցապայքար են ծավալում ռազմավարական նշանակություն ունեցող տարածաշրջանում իրենց երկարաժամկետ դիրքերն ուղենշելու համար: Այս պայքարում, ամենայն հավանականությամբ, կձևավորվեն իրավիճակային դաշինքներ, սակայն ուժի կենտրոններից յուրաքանչյուրը կառաջնորդվի սեփական շահերով և իր համար առավել շահեկան դասավորվածություն կփնտրի ձևավորվող նոր հավասարակշռության մեջ:

Հղումներ

[1] Евросоюз и Центральная Азия: переход к этапу стратегического партнерства. *Коммерсантъ*, 04.04.2025, https://www.kommersant.ru/doc/7637902 (բեռնման օրը՝ 25.12.2025).

[2] Потенциал Азербайджанской Республики в сфере возобновляемых источников энергии: заявления руководства Еврокомиссии. *Azertag.az*, 18.07.2022, https://azertag.az/ru/xeber/2219489 (բեռնման օրը՝ 25.12.2025).

[3] Энергетический диалог ЕС и Азербайджана: концепция «надежного партнерства». *Caliber.az,* 01.10.2022, https://caliber.az/post/ursula-fon-der-lyajen-azerbajdzhan-nadezhnyj-energeticheskij-partner-evropy (բեռնման օրը՝ 26.12.2025).

[4] Внешнеполитическая стратегия администрации Д. Трампа в Центральной Азии: факторы сдерживания РФ и КНР. *BBC News*, 06.11.2025, https://www.bbc.com/russian/articles/ce9d4mvexxno (բեռնման օրը՝ 26.12.2025).

[5] Транспортный коридор TRIPP (Trump Route for International Peace and Prosperity) через территорию Армении: логистические параметры. *Кавказский узел,* 18.12.2025, https://www.kavkaz-uzel.eu/articles/416289 (բեռնման օրը՝ 26.12.2025).

[6] *Куклина И.* Геополитические последствия вывода контингента США из Афганистана. *ИМЭМО РАН.* 24.05.2021, https://www.imemo.ru/news/events/text/the-withdrawal-of-us-troops-from-afghanistan-and-what-is-the-remainder (բեռնման օրը՝ 27.12.2025).

[7] Либерализация инвестиционного законодательства Узбекистана в отношении американских активов (с 2026 г.). *ТАСС*, 19.12.2025, https://tass.ru/ekonomika/25968867 (բեռնման օրը՝ 27.12.2025).

[8] Институционализация стратегического партнерства между Кыргызской Республикой и КНР. *Anadolu Ajansi*, 06.06.2018, https://www.aa.com.tr/ru/1167793 (բեռնման օրը՝ 27.12.2025).

[9] Совместная декларация КНР и Кыргызской Республики об установлении всеобъемлющего стратегического партнерства в новую эпоху. *Жэньминь жибао*, 19.05.2023, https://russian.people.com.cn/n3/2023/0519/c31521-20020580.html (բեռնման օրը՝ 27.12.2025).

[10] Перспективы углубления двустороннего взаимодействия Китая и Киргизии (февраль 2025 г.). *SNG.FM*, 11.02.2025, https://sng.fm/bishkek/35874-sovmestnoe-zajavlenie-ob-uglublenii-

partnerstva-podpisali-kitaj-i-kirgizija.html (բեռնման օրը՝ 27.12.2025).

[11] Инвестиционная стратегия КНР в Казахстане: анализ масштабных вливаний в инфраструктуру. *Независимая газета,* 02.08.2025, https://www.ng.ru/cis/2025-09-02/5_9329_kazakhstan.html (բեռնման օրը՝ 27.12.2025).

[12] Республика Казахстан как приоритетное направление китайских инвестиций в Центральноазиатском регионе. *Kazakhstan Today*, 25.12.2025, https://www.kt.kz/rus/finansy/kazahstan_ostaetsya_krupneyshim_poluchatelem_kitayskih_1377985675.html (բեռնման օրը՝ 27.12.2025).

[13] Динамика роста китайских инвестиций в экономику Узбекистана: ретроспективный анализ десятилетия. *Eurasia Today*, 26.12.2025, https://eurasiatoday.ru/za-desyat-let-investitsii-kitaya-v-uzbekistan-vyrosli-v-40-raz/ (բեռնման օրը՝ 27.12.2025).

[14] Повышение статуса межгосударственных отношений КНР и Узбекистана. *CGTN*, 24.01.2024, https://russian.cgtn.com/news/2024-01-24/1750113429646102530/index.html (բեռնման օրը՝ 27.12.2025).

[15] Формирование всеобъемлющего стратегического партнерства между КНР и Туркменистаном. *ТАСС*, 06.01.2023, https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/16747895 (բեռնման օրը՝ 27.12.2025).

[16] Современное состояние и перспективы двусторонних отношений Таджикистана и Китая. *МИД Республики Таджикистан*, 25.02.2025, https://mfa.tj/ru/main/view/27/otnosheniya-tadzhikistana-s-kitaem (բեռնման օրը՝ 27.12.2025).

[17] *Лемон Э., Норов Р.* Китайско-таджикское взаимодействие в сфере безопасности: факторы и механизмы влияния. *Carnegie Endowment for International Peace*, 30.08.2025, https://carnegieendowment.org/posts/2025/03/how-china-is-adapting-to-tajikistans-demand-for-security-cooperation?lang=ru (բեռնման օրը՝ 27.12.2025).

[18] Принятие декларации о стратегическом партнерстве между Азербайджанской Республикой и КНР. *ТАСС*, 03.07.2025, https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/ 21267517 (բեռնման օրը՝ 27.12.2025).

[19] Установление отношений всеобъемлющего стратегического партнерства между Пекином и Баку (апрель 2025 г.). *Синьхуа*, 23.04.2025, https://russian.news.cn/20250423/d8708574ee2347098d8b1b4c9abd8145/c.html (բեռնման օրը՝ 27.12.2025).

[20] Анализ торгово-экономических показателей взаимодействия Азербайджана и КНР в 2025 г. *Haqqin.az*, 23.12.2025, https://haqqin.az/newsarchive/370104 (բեռնման օրը՝ 27.12.2025).

[21] Военно-техническое сотрудничество в рамках Организации тюркских государств (ОТГ): тенденции и риски. *Комсомольская правда*. 12.02.2025, https://www.kp.ru/daily/27660/5048403/ (բեռնման օրը՝ 28.12.2025).

[22] Унификация алфавита как инструмент культурно-идеологической политики Турции в отношении тюркских государств. *Научно-аналитический фонд «Гегард»*, 12.12.2024, https://geghard-saf.am/ru/490/alphabet-turkic/ (բեռնման օրը՝ 28.12.2025).

[23] Тюркский альянс в системе геополитического баланса сил в Евразии. *Forbes Kazakhstan,* 12.05.2022, https://forbes.kz/articles/dosyim_satpaev_-_o_tyurkskom_alyanse_i__geopoliticheskom balanse (բեռնման օրը՝ 28.12.2025).